



ISSN 1829-4820

Филиал МГУ им. М.В. Ломоносова
в г. Ереване

№17(21)

Журнал входит в список
периодических изданий ВАК РА

ՌՈՒՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ

СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES

IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

«НАУКА ЕСТЬ ЯСНОЕ ПОЗНАНИЕ ИСТИНЫ, ПРОСВЕЩЕНИЕ РАЗУМА»

АЛЕ. ЛОМОНОСОВ, «РИТОРИКА» (1748г.)

2026

**Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական
համալսարանի մասնաճյուղ**

**Филиал Московского государственного университета
им. М.В. Ломоносова в г. Ереване**

M. Lomonosov Moscow State University, Yerevan branch

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

17 (21)

ԵՐԵՎԱՆ 2026

ЕРЕВАН 2026

YEREVAN 2026

*Երաշխավորվել է տպագրության Երևան քաղաքում Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի
անվան պետական համալսարանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից*

*Печатается по решению Ученого совета филиала Московского государственного
университета им. М.В. Ломоносова в г. Ереване*

*Reprinted by decision of the Academic Council of the branch of the Moscow State Univer-
sity M.V. Lomonosov in Yerevan*

«ՈՌԻՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՈՒՐՆԵՐ» գիտամեթոդական հան-
դեսի առաքելությունը ՀՀ-ում ռուսագիտության՝ որպես լեզվաբանության ճյուղի
մասնալականացումն է, ռուսաց լեզվի ուսումնասիրման նկատմամբ հետաքրքրու-
թյուն առաջացնելը, օտարերկրյա հետազոտողների ուշադրությունը հայ գիտնա-
կանների մշակումներին հրավիրելը, դրանով իսկ հայ ռուսագիտության մասնա-
լականացումն է, համատեղ ծրագրերի, դրամաշնորհների մշակման հնարավորու-
թյան ընձեռումը, մագիստրոսների ներգրավումը հետազոտական աշխատանքներին:

Назначение научно-методического журнала **«ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ
РУСИСТИКИ»** рассматривается нами в ракурсе популяризации в РА русистики как
отрасли языкознания, привлечения интереса к изучению русского языка, привлечения
внимания зарубежных исследователей к разработкам армянских ученых и тем самым
популяризации армянской русистики, возможности разработки совместных проектов,
грантов и пр., привлечения магистрантов к научно-исследовательской работе.

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ // Научно-методический журнал, №17
(21). / Глав. ред. Саркисян И.Р.; сост.: Акопян А.С. – Ереван: Изд-во МГУ, 2026. – 306 с.

ISSN 1829-4820

*Журнал входит в список периодических изданий **БАК РА***



 ORCID: 0000-0002-4377-1601

 ORCID: 0000-0001-9263-6791

© Филиал МГУ им. М.В. Ломоносова в г. Ереване

СТИМУЛИРОВАНИЕ ЗАПОМИНАНИЯ КАК СРЕДСТВО ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ ОБУЧЕНИЯ ИНОСТРАННОМУ ЯЗЫКУ

Сирануш Эдуардовна Казарян

ghazaryansiranush@gmail.com

*К.п.н., ст. преподаватель кафедры педагогики и методики преподавания языков,
Государственный университет имени В.Я. Брюсова
Ереван, Республика Армения*

АННОТАЦИЯ

В статье рассматриваются методы, направленные на стимулирование запоминания студентов в процессе обучения иностранным языкам, в частности, мнемотехники и методы мультисенсорного обучения. Исследование включает в себя экспериментальные занятия, в которых указанные методы применяются для повышения эффективности запоминания у студентов в Армении и за рубежом.

Ключевые слова: запоминание, мнемотехника, мультисенсорное обучение, ассоциация.

Օտար լեզուների ժամանակակից ուսուցման համատեքստում շարունակաբար փոփոխություններ են տեղի ունենում դասի պլանավորման, նպատակի ձևակերպման, վերջնարդյունքների սահմանման, մեթոդների կիրառման գործընթացներում: Ուսուցման գործընթացում փոխվում են շեշտադրումները, ընտրվում են համապատասխան մեթոդներ նյութի ներմուծման, ամրապնդման համար: Սակայն հաճախ մտապահման փուլը դասավանդողների կողմից ոչ պատշաճ ուշադրության է արժանանում: Իսկ նյութի, հատկապես բառանյութի մտապա-

հումը օտար լեզվով արդյունավետ հաղորդակցման կարևորագույն հիմքն է: Հետևաբար դասապրոցեստում մտապահմանն ուղղված աշխատանքն անժխտելի անհրաժեշտություն է:

Գոյություն ունեն մտապահման զանազան մեթոդներ: Մույն հոդվածի շրջանակում մենք կկենտրոնանանք մենամտելիսիկաների և բազմազգայական ուսումնառության մեթոդների վրա և կներկայացնենք, թե ինչպես դրանք կարող են կիրառվել բարձրագույն ուսումնական հաստատություններում անգլերենի՝ որպես օտար լեզվի ուսուցման գործընթացում: Թիրախային խումբն այն ուսանողներն են, որոնք բացի անգլերենից տիրապետում են նաև ռուսերենին և ֆրանսերենին: Այնուհանդերձ, առաջարկվող մեթոդները կիրառելի են նաև միայն մեկ օտար լեզվի տիրապետող ուսանողներին դասավանդելու, ինչպես նաև այլ օտար լեզուների ուսուցման գործընթացներում:

Նոր նյութի ընկալումը հիմնականում սկսվում է դասավանդողի կողմից նյութի ներմուծումից, որից հետո ուսանողի մոտ տեղի է ունենում նյութի մշակում և հետադարձ կապ, որը փաստում է, որ նյութն անցել է մշակման և վերլուծության փուլ և յուրացվել է ուսանողի կողմից:

Ընկալվելուց հետո տեղեկատվությունը ուսանողի հոգեկանում չի գրանցվում միանգամից այն ձևով, որով հետագայում պահպանվելու է: Այն սկզբում մուտք է գործում ուսանողի կարճատև հիշողություն, որում, սակայն, անձը կարող է «տեղավորել» մոտավորապես 5–7 միավոր: Իսկ տևական հիշողության մեջ, որի ծավալն արդեն շատ մեծ է, տեղեկատվությունը պահպանվում է ավելի երկար՝ մի քանի ամսից սկսած մինչև ամբողջ կյանքի ընթացքում: Կարճատև և տևական հիշողությունների միջև գտնվում է օպերատիվ հիշողությունը, որում տեղեկատվությունը կարող է մնալ մի քանի ժամ, որից հետո անցնել տևական հիշողություն: Ուսումնասիրությունները փաստում են, որ եթե տեղեկատվությունը 20 վայրկյանից ավել մնա կարճատև հիշողությունում,

ապա կարող է ամրապնդվել և անցնել տնական հիշողություն [1: 188, 190–191]:

Որպեսզի տեղեկատվությունը անցում կատարի ուսանողի կարճատև հիշողությունից և մնա նրա տնական հիշողությունում, ուսուցման գործընթացում նյութի ներմուծումից հետո պետք է կիրառվեն նյութի ամրապնդման և մտապահման համապատասխան մեթոդներ: Օրինակ՝ առաջին 5–7 բառը ներմուծելուց հետո 20 վայրկյանի ընթացքում կարելի է կատարել կրկնություն, բառերը ներկայացնել՝ ակտիվացնելով ուսանողների տարբեր զգայարանները կամ խթանել զուգորդությունների ստեղծումը: Այնուհետև ընկալողական և վերարտադրողական տարբեր վարժությունների միջոցով անհրաժեշտ է ամրապնդել բառերը: Հետագայում բառերի մտապահման նպատակով արդեն կարելի է կիրառել մենմոտեխնիկաներ, ինչը ենթադրում է մտապահման նպատակով պատկերացումների, հույզերի ներառում գործընթացում՝ հապավումներ, ակրոստիքոսներ, հատվածավորում, զուգորդություններ, տեղակայում, հանգեր, երգեր և այլն:

Ներկայացնենք մենմոտեխնիկաների կիրառման որոշ օրինակներ անգլերենի «Աշխատանք և մասնագիտություններ» (Jobs and Occupations) թեմայի շրջանակում:

- **Հապավման ստեղծում**

Դասավանդողը կարող է թեմայի շրջանակում ներկայացված բառերը՝ *journalist*՝ լրագրող, *orthodontist*՝ օրթոդոնտ, *biologist*՝ կենսաբան, *speech therapist*՝ լոգոպեդ, *meteorologist*՝ օդերևութաբան, *accountant*՝ հաշվապահ, *real estate agent*՝ անշարժ գույքի գործակալ, *translator*՝ թարգմանիչ, ներկայացնել մտապահման համար հարմար JOBSMART հապավման միջոցով:

- **Ակրոստիքոսի կազմում**

Դասավանդողն այնուհետև կարող է սովորողների հետ կազմել ակրոստիքոս արդեն առանձին բառերով: Ներկայացնենք մեկ օրինակ *translator*՝ թարգմանիչ բառով (Տե՛ս *Աղյուսակ 1*):

Աղյուսակ 1

Ակրոստիքոս

Անգլերեն ակրոստիքոս	Հայերեն թարգմանություն
TRANSLATORS Translators work with words, R ender meaning, A lign thoughts, Navigate communication, Synchronize expressions. L ink cultures A rtfully conveying thoughts. Translating from one language, O pening new doors, they DO finally R econnect worlds.	ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐ Թարգմանիչներն աշխատում են բառերի հետ, փոխանցում իմաստ, համապատասխանեցնում մտքեր, ուղղորդում հաղորդակցություն, սինխրոնացնում արտահայտություններ: Կապում են մշակույթներ՝ մտքերը հմտորեն փոխանցելով: Թարգմանելով մեկ լեզվից, նոր դռներ բացելով՝ նրանք ի վերջո ԻՍԿԱՊԵՍ աշխարհներ են վերամիավորում:

Մույն ակրոստիքոսը փոխանցում է նաև թարգմանչի աշխատանքի էությունը: Դրա միջոցով դասավանդողը կարող է բացատրել նաև այլ լեզվական երևույթներ, օրինակ՝ դերբայական դարձվածք, ինչպես նաև *DO* օժանդակ բայի կիրառությունը՝ հաստատական նախադասությունում բային առավել ուժեղ շեշտադրում տալու նպատակով, որը հայերենում այս դեպքում կարող է թարգմանվել՝ *ԻՍԿԱՊԵՍ*:

- Հատվածավորում

Journalist՝ լրագրող բառը կարող է ներկայացվել հատվածներով՝ *journal* (ֆրանսերեն՝ *թերթ* բառից (ի դեպ ֆրանսերենից հետո անգլերեն սովորողների համար նման համեմատություններն առավել քան կարևոր են)), *-ist*, որը վերաբերում է անձին, որը զբաղվում է կոնկրետ մասնագիտությամբ կամ գործունեությամբ, ինչպես օրինակ՝ *pianist*՝ *դաշնակահար*, *psychologist*՝ *հոգեբան* և այլն: *Orthodontist*՝ օրթոդոնտ բառը կարող է դարձյալ բաժանվել երկու հատվածի՝ *ortho-*, որը վերաբերում է *ուղիղ* կամ *ճիշտ* հասկացությանը, ինչպես օրինակ՝ *orthopedic*՝ *օրթոպեդիկ* բառում, որը ներկայացնում է բժշկության ճյուղ, որն առնչվում է դեֆորմացիաների ուղղմանը կամ շտկմանը: Այլ օրինակ է *orthodox*՝ *ուղղափառ* բառը, որն անգամ հայերեն թարգմանության մեջ պահպանում է *ուղիղ* արմատը: Երկրորդ հատվածը՝ *-ist*, որն, ինչպես նշեցինք, առնչվում է որևէ ոլորտում մասնագիտացված անձի, այս դեպքում՝ ատամների, նման է *dentist*՝ *ատամնաբույժ* բառին, որը վերաբերում է ատամնաբուժության ոլորտում մասնագիտացած անձի:

• **Զուգորդությունների կիրառում**

Զուգորդությունների կիրառումը բավականին դյուրացնում է նոր տեղեկատվության յուրացման գործընթացը, քանի որ այն ավելի լավ է յուրացվում և մտապահվում, եթե կապվում է արդեն իմացածի հետ: Պարտադիր չէ, որ զուգորդությունները տրամաբանված լինեն. դրանք կարող են լինել նաև ոչ տրամաբանական, երբեմն՝ ծիծաղելի: Կարևորը մտապահումն է: Զուգորդությունները կարող են ստեղծվել արդեն յուրացված գիտելիքի կամ սովորողների սեփական փորձառության հետ: Օրինակ՝ անգլերեն *jolly*՝ *ուրախ*, *հաճելի* բառը սովորողները կարող են հիշել՝ այն զուգորդելով հայտնի ամերիկացի դերասանուհի Անջելինա Ջոլիի ազգանվան հետ, ով համարվում է գեղեցիկ և հաճելի անձնավորություն:

• **Տեղակայման մեթոդ**

Տեղակայման մեթոդը, որն անվանվում է նաև «Հիշողության պալատ», նպաստում է, որ բառերը հիշվեն՝ ըստ մտապատկերներում իրենց տեղակայման: Ենթադրվում է, որ լեզվական երևույթներն ավելի լավ կհիշվեն, եթե սովորողներին հանձնարարվի դրանք տեղակայել իրենց պատկերացման մեջ իրենց լավ ծանոթ որևէ վայրում, օրինակ՝ իրենց ծանոթ սենյակում տանը, համալսարանում և այլն: Նրանք պետք է, օրինակ, բառերը մտովի տեղակայեն որևէ տեղում իրենց պատկերացրած վայրում [6]: Բառերի, այսպես ասած, մտովի տեղակայումը համապատասխան վայրերում կարող է լինել ուղղորդված դասավանդողի կողմից կամ ամբողջովին թողնվել յուրաքանչյուր սովորողի հայեցողությանը: Վերոնշյալ թեմայով այս մեթոդի ուղղորդված կիրառումը ներկայացնենք հավանական պատմության միջոցով (Տե՛ս Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Տեղակայման մեթոդի կիրառմամբ ստեղծված տեքստի օրինակ

Անգլերեն տեքստ	Հայերեն թարգմանություն
Imagine you have decided to rent out your apartment. You have decided to shoot a video about your apartment. You make an appointment with a real estate agent and go to your house together with him. The real estate agent is from the USA. You can communicate with him as you know English but you still need a translator to carry out a transaction with him. The translator is waiting for you at the entrance of your house. You enter the apartment with the real estate agent and	Պատկերացրեք, որ որոշել եք վարձով տալ Ձեր բնակարանը: Որոշել եք նկարահանել Ձեր բնակարանի մասին տեսանյութ: Պայմանավորվում եք անշարժ գույքի գործակալի հետ և նրա հետ միասին գնում Ձեր տուն: Անշարժ գույքի գործակալը ԱՄՆ-ից է: Դուք կարող եք հաղորդակցվել նրա հետ, քանի որ գիտեք անգլերեն, այնուամենայնիվ, Ձեզ անհրաժեշտ է թարգմանիչ նրա հետ գործարքն իրականացնելու համար:

the **translator** you met at the entrance of the house. And in the corridor of the house, right in front of you, is the **journalist** standing with a smile on his face.

You go to the living room. In the living room, the TV is on, and the **meteo-
rologist** is presenting the weather forecast for that day.

The **accountant** is sitting at the table next to the TV-set, with a notebook in his hand. He has come to assist you in calculating your income and expenses for you to decide on a reasonable rental amount.

Your guests ask you for water. You enter the kitchen where you meet your **orthodontist** friend, who has come to see a selection of food you have and show you the food that can do the least damage to your teeth now that you have started wearing braces.

After greeting and thanking him you take the water and head back to the living room.

On your way, you see your **speech therapist** friend from the open bedroom door, whom you have called to help you correct the pronunciation of the sounds you have started to mispronounce since wearing the braces.

The **biologist** is out on the balcony connected to your bedroom. He is examining the state of your houseplants to propose effective measures for the improvement of their overall health.

Greeting the **speech therapist** and the **biologist**, you return to the living room where the **real estate agent**, the **transla-**

Թարգմանիչը սպասում է Ձեր տան մուտքի մոտ: Ներս եք մտնում **անշարժ գույքի գործակալի** և տան մուտքի մոտ հանդիպած **թարգմանչի** հետ միասին: Իսկ տան միջանցքում՝ հենց ձեր դիմաց, կանգնած է լրագրողը՝ ծափաղ դեմքին:

Մտնում եք հյուրասենյակ: Հյուրասենյակում հեռուստացույցը միացված է, իսկ եթերում **օթերևութաբանը** ներկայացնում է այդ օրվա եղանակի տեսությունը:

Հեռուստացույցի կողքին, սեղանի մոտ նստած է **հաշվապահը**, ձեռքին նոթատետր: Նա եկել է օգնելու Ձեզ հաշվարկել Ձեր եկամուտներն ու ծախսերը, որպեսզի կարողանաք որոշել խելամիտ գին վարձակալության համար:

Ձեր հյուրերը Ձեզանից ջուր են խնդրում: Դուք մտնում եք խոհանոց, որտեղ հանդիպում եք Ձեր **օրթոդոնտ** ընկերոջը, ով եկել է, որպեսզի Ձեր ունեցած մթերքներից ընտրի և ցույց տա այն մթերքը, որը հնարավորինս քիչ վնաս կհասցնի Ձեր ատամնաշարին այս պահին, երբ Դուք նոր եք սկսել կրել բրեկետներ:

Նրան ողջունելուց և շնորհակալություն հայտնելուց հետո վերցնում եք ջուրը և վերադառնում հյուրասենյակ:

Ճանապարհին ննջասենյակի բաց դռնից տեսնում եք Ձեր լոգոպեդ ընկերոջը, ում Դուք կանչել էիք, որպեսզի օգնի շտկել այն հնչյունների արտաբերումը, որոնք սկսել եք սխալ արտասանել բրեկետները կրելուց հետո:

tor, the journalist, and the accountant are waiting for you to start the work.	Կենսաբանը ննջասենյակին միացված պատշգամբում է: Նա ուսումնասիրում է ձեր սենյակային բույսերի վիճակը, որպեսզի առաջարկի դրանց ընդհանուր առողջության բարելավման արդյունավետ միջոցներ: Ողջունելով լոգոպեդին և կենսաբանին՝ Դուք վերադառնում եք հյուրասենյակ, որտեղ Ձեզ սպասում են անշարժ գույքի գործակալը, թարգմանիչը, լրագրողը և հաշվապահը աշխատանքը սկսելու համար:
--	---

Պատմությունը փոքր-ինչ տարօրինակ և ծիծաղելի է, սակայն դա նույնպես նպաստում է բառերի առավել լավ մտապահմանը: Ինչպես տեսանելի է, պահպանված է ներմուծման համար օպտիմալ 8 նոր բառի սահմանաչափը: Վերջում դասավանդողը սովորողներին խնդրում է մտքով քայլել նույն ուղեգծով և թվարկել բոլոր մասնագիտությունները: Այլընտրանքային ոչ ուղղորդված տարբերակ է, երբ սովորողներին հանձնարարվում է պատկերացնել իրենց տունը կամ դասասենյակը և նշված մասնագիտություններին վերաբերող բառերը մտովի դասավորել համապատասխան սենյակներում:

• Հանգերի և երգերի կիրառում

Հանգերի կիրառումը արդյունավետ է մտապահման տեսանկյունից: Շատ երեխաներ 26 պատահական տառից բաղկացած անգլերեն այբուբենը սովորում և մտապահում են պարզ հանգային մեղեդիով լսելու և կրկնելու միջոցով: Երգերը և հանգավոր բանաստեղծություններն արդյունավետ են նաև ուսանողների համար:

Հետազոտությունները ցույց են տվել, որ օտար լեզուն կարող է ավելի լավ մտապահվել, եթե այն երգի վերածվի կամ երգի միջոցով

ուսուցանվի [5]: Այսպիսով, օտար լեզուների ուսուցման գործընթացում շատ կարևոր է կիրառել նաև հանգավոր բանաստեղծություններ և երգեր: Ներկայացնենք հանգավոր բանաստեղծությունների որոշ օրինակներ նույն «Աշխատանք և մասնագիտություններ» թեմայի շրջանակում (Տե՛ս Աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Հանգավոր բանաստեղծությունների օրինակներ

Հանգավոր բանաստեղծություն անգլերենով	Հայերեն թարգմանություն ¹
Doctor, lawyer, engineer, In different jobs, they persevere, Teachers, painters, pilots too, So many options, What will you pursue?	Բժիշկ, իրավաբան, ինժեներ, Տարբեր աշխատանքներ են համառո- րեն կատարում, Ուսուցիչը, նկարիչը, օդաչուն նույն- պես, Այսքան տարբերակներ կան, Ինչի՞ն էք հետամուտ լինելու:
In the city or on a farm, People work to show their charm. Teachers guide with wisdom bright, Students learn both day and night.	Քաղաքում, թե ֆերմայում, Մարդիկ աշխատում են և ցուցադրում իրենց հմայքը: Ուսուցիչներն առաջնորդում են պայ- ծառ իմաստությամբ, Ուսանողները սովորում են օրուգիշեր:

¹ Թարգմանությունում հանգերը պահպանված չեն: Հայերեն թարգմանության մեջ նպատակը եղել է յուրաքանչյուր տողում յուրաքանչյուր բառի հնարավոր թարգմանության ցուցադրումը, ոչ թե ընդհանուր իմաստի ներկայացումը:

Chefs cook tasty meals so sweet, Waiters serve with nimble feet. Painters paint with colors bold, Expressing stories, to be told. No matter the job, big or small, Together, we build a world for all.	Խոհարարները համեղ ուտեստներ են պատրաստում՝ այնքան քաղցր, Մատուցողները սպասարկում են արագաշարժ ոտքերով: Նկարիչները նկարում են համարձակ գույներով, Արտահայտելով պատմություններ, որոնք պետք է պատմվեն: Անկախ աշխատանքից՝ մեծ, թե փոքր, Միասին մենք կառուցում ենք աշխարհ բոլորի համար:
---	---

Այսպիսով, ուսուցման գործընթացում բավականին դժվար է մտա-
պահման խթանումը: Այս դեպքում կարևոր է սովորողների կամաձին
հիշողության ակտիվացումը:

Կամաձին հիշողությունն առավելապես վերաբերում է ուղեղի ձախ
կիսագնդին, դրա համար անհրաժեշտ է, որ սովորողը բացահայտի
երևույթների միջև գոյություն ունեցող օրինաչափ կապերը, այսինքն՝
տեղի ունենա իմաստավորված կամաձին մտապահում: Այնուհետև
դրան օգնում է գիտակցորեն որոշակի գուգորդություններ ստեղծելը:
Զուգորդությունները կարելի է ստեղծել ոչ միայն սովյալ նյութի բաժին-
ների և տարրերի միջև, այլ նաև նոր տեղեկատվության և նախորդող
գիտելիքների միջև [1: 204–205]:

Այս պարագայում կարևոր ռազմավարություն է նաև մի քանի զգա-
յարանների ակտիվացումը: Ինչքան շատ զգայարաններ են աշխատում
նյութի ընկալման և ամրապնդման գործընթացում, այնքան նյութն առա-
վել լավ է յուրացվում և մտապահվում: Այս տեսանկյունից նպատակա-
հարմար է կիրառել բազմազգայական ուսումնառության տարբեր մե-
թոդներ:

Բազմազգայական ուսումնառությունը ենթադրում է ուսումնառության գործընթացում տարբեր զգայարանների ակտիվացումը՝ տեսողության, լսողության, շոշափելիքի, համի, հոտառության: Բազմազգայական ուսումնառությունը ներառում է նաև մարմնի շարժումների, ֆիզիկական ակտիվության դրսևորմամբ նյութի ընկալման գործընթացը [2]: Բազմազգայական ուսումնառությունը ներառում է նվագագույնը երկու զգայարանի ակտիվացում [4]:

Ստորև ներկայացնում ենք բազմազգայական ուսումնառության որոշ մեթոդներ, որոնք կարող են նպաստել սովորողների ինչպես լեզվական, այնպես էլ հաղորդակցական կարողությունների զարգացմանը:

- *Բառերի ձևի յուրացում՝ դրանք օդում գրելով*

Կոչվում է նաև *երկնքում գրել*, նպաստում է բառերի մտապահմանը մկանային հիշողության և տեսողական հիշողության միջոցով: Ակտիվացվում է տեսողական, մարմնաշարժողական զգայարանը: Քանի որ բառերը նաև հնչեցվում են, ապա ակտիվանում է նաև լսողության զգայարանը [3]: Այլ տարբերակ կարող է լինել յուրաքանչյուր հնչյուն արտաբերելիս այն բթամատի և այլ մատների հպումներով զուգակցելը, որը նպաստում է նաև շոշափելիքի զգայարանի ակտիվացմանը, ինչը դյուրացնում է ուղղագրության և, ընդհանրապես, բառի առավել լավ մտապահումը: Մեթոդը կարելի է կիրառել հատկապես անգլերենում և ֆրանսերենում մոտ, սակայն տարբերվող գրություն ունեցող բառերի համար: Օրինակ՝ անգլերեն *colour* (ամերիկյան անգլերենում՝ *color*)՝ գույն – ֆրանսերեն *couleur*, անգլերեն *natural*՝ բնական – ֆրանսերեն *naturel*, անգլերեն *future*՝ ապագա – ֆրանսերեն *futur*, անգլերեն *music*՝ երաժշտություն – ֆրանսերեն *musique*, անգլերեն *victory*՝ հաղթանակ – ֆրանսերեն *victoire*, անգլերեն *example*՝ օրինակ – ֆրանսերեն *exemple* և այլն:

- *Բույրերով քարտերի կիրառում*

Դասավանդողը կարող է ստեղծել կամ վերցնել քարտեր, որոնց վրա դասի թեմային առնչվող բառերն են, այլ դատարկ քարտերի վրա կլինեն նախապես պատրաստված տարբեր բույրեր: Սովորողները կհամապատասխանեցնեն բառերը բույրերի հետ՝ ակտիվացնելով հոտառության զգայարանը և հետևաբար մտապահումը: Այնուհետև կարող են աչքերը փակ զգալ բույրը և վերհիշել համապատասխանող բառը: Սա կարող է իրականացվել անհատական կամ խմբային աշխատանքի ձևով:

- *Ընթերցանության զգայական անկյուններ*

Դասավանդողը լսարանում ստեղծում է անկյուններ՝ տարբեր զգայական տարրերով՝ փափուկ բարձեր, բույրերով մոմեր, հանգիստ երաժշտություն: Ուսանողներն ընթերցում են անգլերեն տեքստեր այդ միջավայրերում, այնուհետև քննարկում ընկալումները կամ փորձում են նույն տեքստն ընթերցել տարբեր անկյուններում՝ համեմատելով իրենց իսկ փորձը տարբեր միջավայրերում: Ընկալման գործընթացին ավելանում են լրացուցիչ զգայական ընկալումները:

- *Փոխներգործուն պատմությունների ընթերցում*

Այս պատմությունների պարագայում ընթերցողները, այս դեպքում՝ ուսանողները, կարող են ազդել պատմությունների ընթացքի վրա իրենց ընտրություններով՝ փոխելով դրանց ընթացքը: Որոշ հարթակներ հնարավորություն են տալիս փոխներգործությունն ապահովել ոչ միայն գրավոր, այլ նաև բանավոր խոսքի միջոցով. ուսանողները կարող են ավելացնել նաև նկարներ, տեսանյութեր և այլ մուլտիմեդիա բաղադրիչներ: Փոխներգործուն պատմությունների համար անվճար և հարմար հարթակներ են *Twine* (<https://twinery.org/>), *Inklewriter* (<https://www.inklestudios.com/inklewriter/>) և *Squiffy* (<https://textadventures.co.uk/squiffy>) հարթակները:

• *Զգայական երկխոսությունների կազմում*

Ուսանողները ներգրավվում են երկխոսություններում, որոնց ժամանակ հերթով կապում կամ փակում են աչքերը: Մասնակիցներից մեկը խոսում է, իսկ մյուսը՝ լսում և արձագանքում: Այս դեպքում զարգանում են ուսանողների խոսելու և ունկնդրելու կարողությունները՝ կենտրոնանալով ոչ խոսքային հաղորդակցության նշաններից գերծ հաղորդակցության վրա:

Նշված մեթոդները, ի լրումն այլ մեթոդների, կիրառվել են փորձարարական ուսուցման շրջանակում՝ Հայաստանում և արտասահմանում (ՀՀ Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում, Երևանի պետական համալսարանում, Ռուս-հայկական համալսարանում, համեմատական ուսումնասիրության նպատակով նաև՝ Ռումինիայի Հանրապետության Պիտեշտի համալսարանում, Չեխիայի Հանրապետության Հարավային Բոհեմիայի համալսարանում):

Փորձարարական ուսուցումն իրականացվել է 3-րդ կուրսում Հայաստանի բուհերում մեկ կիսամյակ, իսկ արտերկրի բուհերում՝ մեկ ամիս տևողությամբ: Փորձարարական ուսուցմանը մասնակցել է 116 ուսանող Հայաստանում (58-ը՝ ստուգողական, 58-ը՝ փորձարարական խմբերում) և 120 ուսանող Ռումինիայի և Չեխիայի բուհերում (60-ը՝ ստուգողական, մյուս 60-ը՝ փորձարարական խմբերում համապատասխանաբար):

Փորձարարական ուսուցման արդյունքների վերլուծությամբ և համադրությամբ ակնհայտ է եղել ուսանողների կողմից նյութի մտապահման դրական շարժընթացը:

Հետփորձարարական անկետավորման պատասխանները նույնպես փաստում են, որ վերոնշյալ մեթոդները նպաստել են նյութի մտապահման խթանմանը, հաջորդաբար նաև օտար լեզվի ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

Այսպիսով, օտար լեզվի ուսուցման գործընթացում մտապահման խթանումը մենմոտեխնիկաների և բազմազգայական ուսումնառության մեթոդների միջոցով նպաստում է օտար լեզվի ուսուցման ընդհանուր արդյունավետության բարձրացմանը:

ЛИТЕРАТУРА

1. Նալչաջյան Ա. Ա. Հոգեբանության հիմունքներ: – Երևան՝ Հոգեբան հրատ., 1997, XVIII: – 648 էջ:
2. Carreker S., Birsh J.R. Multisensory Teaching of Basic Language Skills Activity Book. – Baltimore, MD: Paul H. Brookes Publishing Company, 2011. – 194 p.
3. Dunn R., Dunn K. Teaching Secondary Students Through Their Individual Learning Styles: Practical Approaches for Grades 7–12. – Boston: Allyn and Bacon, 1993. – 478 p.
4. Pashler H., McDaniel M., Rohrer D., & Bjork R. Learning Styles: Concepts and Evidence // Psychological Science in the Public Interest, 2008, Vol. 9, Issue 3. – PP. 105–119. – DOI: [10.1111/j.1539-6053.2009.01038.x](https://doi.org/10.1111/j.1539-6053.2009.01038.x).
5. Thompson Z., Baker F.A., Tamplin J., Clark I.N. How Singing can Help People With Dementia and Their Family Care-Partners: A Mixed Studies Systematic Review With Narrative Synthesis, Thematic Synthesis, and Meta-Integration // Frontiers in Psychology, 2021 Oct 11, Vol. 12: 764372. – DOI: [10.3389/fpsyg.2021.7-64372](https://doi.org/10.3389/fpsyg.2021.7-64372). – PMID: 34707550. – PMCID: [PMC8542693](https://pubmed.ncbi.nlm.nih.gov/PMC8542693/).
6. Twomey C., Kroneisen M. The Effectiveness of the Loci Method as a Mnemonic Device: Meta-analysis // Quarterly Journal of Experimental Psychology, 2021 Feb 3, Vol. 74, Issue 8. – PP. 1317–1326. – DOI: [10.1177/1747021821993457](https://doi.org/10.1177/1747021821993457).

**ՄՏԱՊԱՀՄԱՆ ԽԹԱՆՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ**

Ս.Է. Ղազարյան

ghazaryansiranush@gmail.com

*Մ.գ.թ., Մանկավարժության և լեզուների դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի ավագ դասախոս,*

Վ.Յա. Բրյուսովի անվ. պետական համալսարան
Երևան, Հայաստանի Հանրապետություն

ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննության են առնվում օտար լեզուների ուսուցման գործընթացում ուսանողների մտապահման խթանմանն ուղղված մեթոդները, հատկապես՝ մենմոտեխնիկաները և բազմազգայական ուսումնառության մեթոդները: Հետազոտությունը ներառում է վերոնշյալ մեթոդների կիրառմամբ փորձարարական ուսուցում Հայաստանում և արտերկրում:

Բանալի բառեր՝ մտապահում, մենմոտեխնիկաներ, բազմազգայական ուսումնառություն, զուգորդություն:

FOSTERING RETENTION AS A MEANS OF ENHANCING THE EFFECTIVENESS OF FOREIGN LANGUAGE TEACHING

S. Ghazaryan

ghazaryansiranush@gmail.com

PhD, Senior Lecturer at the Department of Pedagogy
and Language Teaching Methodology,
Brusov State University
Yerevan, Republic of Armenia

ABSTRACT

The article examines techniques aimed at fostering students' retention in foreign language learning, specifically mnemonic and multisensory learning techniques. The study includes experimental sessions employing these techniques to enhance retention among students in Armenia and abroad.

Keywords: retention, mnemonic techniques, multisensory learning, association.

Информация о статье:

статья поступила в редакцию 23 апреля 2026 г.,
подписана к печати в номер 17 (21) / 2026 – 25.06.2026 г.

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

Главный редактор



Саркисян И.Р. – д.п.н., профессор, профессор кафедры русского языка и профессиональной коммуникации Института филологии и межкультурной коммуникации Российско-Армянского университета, заслуженный профессор РАУ.

 **ORCID:** [0000-0002-4377-1601](https://orcid.org/0000-0002-4377-1601)

SPIN-код: [8936-7319](#), **AuthorID:** 1056296

Составитель, технический редактор, вёрстка и дизайн



Акопян А.С. – ст. преподаватель кафедры русского языка и профессиональной коммуникации Института филологии и межкультурной коммуникации Российско-Армянского университета; ст. преподаватель Санкт-Петербургского политехнического университета Петра Великого (СПбПУ); доцент Медицинского института имени Меграбяна; Действительный член (академик) Международной Академии Нейронаук (МАН, РА).

 **ORCID:** [0000-0001-9263-6791](https://orcid.org/0000-0001-9263-6791)

SPIN-код: [1465-8539](#) / **Author ID:** 1045228

Корректоры:

Акопян А.С., Согомонян М.Р., Мурадян К.Г.

Адрес Редакции научных изданий
Филиала Московского государственного университета
им. М.В. Ломоносова в г. Ереване:
0025 РА, г. Ереван, ул. Вардананц 17
e-mail: po@msu.am

Заказ № 25

Подписано к печати – 28.06.2026 г.
Формат 60х84¹/₁₆. Бумага офсетная № 1.
Объем – 19,125 печ. л. Тираж 250 экз.